ԱՐՄԱՏԱՊԵՍ ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 15-րդ համագումարը հանրագումարի բերեց այն մեծ և բեղմնավոր աշխատանքը, որ կատարվել է 14-րդ համագումարից հետո և նշեց հետագա աշխատանքի ու պայքարի ծրագիր՝ հանուն ռեսպուբլիկայի արդյունաբերության ու գյուղատնտեսության նոր վերելքի, հանուն Սովետական Հայաստանի աշխատավոր մասսաների կուլտուրական և նյութական պայմանների հետագա բարելավման։

Իր հաշվետու զեկուցման մեջ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Իր. Հարությունյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում՝ շնորհիվ իդեոլոգիական հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումների կենսագործման, ռեսպուբլիկան ունեցել է նշանակալից վերելք՝ կուլտուրայի, գիտության, գրականության և արվեստի բնագավառում։

Հայկական ՍՍՌ գիտա-հետազոտական հիմնարկները կատարել են գիտական մի շարք կարևոր աշխատանքներ։ Այդ թվում՝ ամենից առաջ անհրաժեշտ է նշել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադ. Վ. Հ. Համբարձումյանի և գիտությունների թեկնածու ընկ. Բ. Ե. Մարգարյանի աշխատանքը աստղային ասոցիացիաների մասին։ Գիտական և պրակտիկ խոշոր նշանակություն ունեն հանգուցյալ ակադեմիկոս Մ. Գ. Թումանյանի «Վայրի տարեկանի ծագման պրոբլեմը» հետազոտությունը և քիմիական գիտությունների թեկնածու Մ. Գ. Մանվելյանի աշխատանքը՝ նեֆելինային սիենիտներից արդյունաբերության համար հումք ստանալու մասին և մի շարք այլ աշխատություններ։

Որոշ հաջողություններ կան նաև հասարակական գիտությունների բնագավառում։ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտն արդեն հրատարակել է «Հայ գրականության պատմության» դասագրքի առաջին և երկրորդ հատորները, տպագրության է պատրաստել այդ դասագրքի երրորդ հատորը, իսկ Պատմության ինստիտուտը լույս է ընծայել «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի առաջին մասը, և մոտ ժամանակներում լույս կընծայի նրա երկրորդ մասի մակետը։

Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների ձեռք բերած այս առանձին նվաճումները, սակայն, չեն կարող սքողել այն փաստը, որ մինչև այժմ այդ հիմնարկները դեռևս լրջորեն հետ են մնում կյանքի պահանջներից, չեն տալիս այն ակտուալ և բարձրորակ գիտական արտադրանքը, որն իրավացիորեն նրանցից պահանջում է մեր ժողովուրդը։

«Գիտության ասպարեզում,—նշեց պարտիայի 15-րդ համագումարը,—հատկապես լուրջ թերություններ կան հասարակական գիտությունների բնագավառի հիմնարկների աշխատանքում։ Դեռ վատ է աշխատում Գիտու-

թյունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը։ Դեռևս դանդաղ է ծավալվում համապատասխան հիմնարկների և ամբիոնների աշխատանքը՝ լեզվաբանության հարցերի վերաբերյալ ընկեր Ստալինի կլասիկ աշխատությունների հիման վրա։ Գիտությունների ակադեմիայի մի շարք գիտական հիմնարկներ ուռճանում են ի հաշիվ այնպիսի մարդկանց, որոնք այնքան էլ պիտանի չեն գիտական աշխատանքի համար։ Մի քանի գիտական հիմնարկներ երկար ժամանակ է, որ գիտական ոչ մի արտադրանք չեն տալիս։ (Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 15-րդ համագումարի բանաձևը, էջ 12)։

Բացառիկ նշանակություն տալով Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների աշխատանքներին, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը ժամանակին հատուկ որոշումներ ընդունեց նրանցից յուրաքանչյուրի մասին։ Այդ որոշումների մեջ Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների և սեկտորների առաջ միանգամայն պարզ ու կոնկրետ խնդիրներ դրվեցին, նշվեցին զոյություն ունեցող թերությունների վերացման և իդեոլոգիական հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի պատմական որոշումների կենսագործման բոլշևիկյան ուղիներն ու մեթոդը։

Միանգամյան անհանդուրժելի է, որ մեր ինստիտուտների և սեկտորների որոշ ղեկավարներ դեռևս լիակատար կերպով ու ժամանակին չեն կենսագործել Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի այդ որոշումները։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանը համագումարում տված իր հաշվետու զեկուցման մեջ միանգամայն իրավացիորեն նշեց, որ մեր Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքն անբավարար է զբաղվում նոր, նորագույն և մասնավորապես սովետական ժամանակաշրջանի պատմության ու գրականության ակտուալ հարցերով։ Նա որպես օրինակ նշեց Գիտությունների ակադեմիայի Արվեստի սեկտորը (սեկտորի վարիչ՝ ընկ. Մ. Սարյան), որն իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում չի հրատարակել և ոչ մի գիտա-հետազոտական աշխատություն՝ արվեստի, ճարտարապետության և թատրոնի վերաբերյալ, չի կարողացել իր կադրերի ջանքերն ուղղել դեպի սովետահայ արվեստի նվաճումների գիտական ընդհանրացումը։

Դեռևս նվազ արդյունավետ է Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության սեկտորի (վարիչ՝ ընկ. Ն. Վարդապետյան) ու Տնտեսագիտության սեկտորի (վարիչ՝ ընկ. Ա. Մարության) գործունեությունը։ Այդ հիմնարկներն իրենց գոյության բավական երկար տարիների ընթացքում լուրջ և լարված աշխատանքի պայմաններում ունեին բոլոր հնարավորությունները աճելու և դառնալու ինքնուրույն գիտա-հետազոտական ինստիտուտներ և զբաղելու իրենց արժանի տեղը մեր ակադեմիայի սիստեմում։ Սակայն նրանց այժմյան վիճակը, դժբախտաբար հիմք չի տալիս ենթադրելու, որ նրանք մոտ են այդ նպատակին։

Ընկ. Ա. Ղարիբյանի և նրա համախոհների կողմից լեզվի ինստիտուտում հաստատված արակչեևյան ռեժիմի հետևանքով, անարգվում և աշխատանքից վտարվում էին բոլոր նրանք, ովքեր չէին դավանում Ն. Յա. Մառի հակագիտական լեզվաբանական հնարանքները։ Ինստիտուտում իշխում էր կորդ ու կանոնի լիակատար բացակայություն, կանգ էր առել գիտական միտքը։

Ինչպես նշում է ընկ. Հարությունյանը, մինչև այժմ էլ դեռևս դանդաղ է ընթանում ակադեմիայի Լեզվի ինստիտուտի և Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի ու Մանկավարժական ինստիտուտների լեզվի ամբիոնների վերակառուցումը։ Այդ հիմնարկները դեռևս գործնական քայլեր և հետևություններ չեն արել լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի կլասիկ աշխատություններից։

Ո՞րոնք են մեր ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի անթույլատրելիորեն ետ մնալու պատճառները, ինչու սովետական հայրենասիրությամբ տոգորված, մարքս-լենինյան լուրջ ուսումնասիրությունների քանակը՝ փիլիսոփայության, տնտեսագիտության, պատմության, գրականության և արվեստի մասին, այդքան քիչ է։ Ինչով բացատրել, որ մեր ռեսպուբլիկայի տնտեսության ու կուլտուրայի բուռն վերելքի պայմաններում Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկները ետ են մնում սոցիալիստական շինարարության պրակտիկայի գիտական ընդհանրացման գործում, չեն տալիս սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար մղվող պայքարին օժանդակող անհրաժեշտ քանակությամբ աշխատություններ։

Մեծ Ստալինը սովորեցնում է, որ կադրերն են որոշում ամեն ինչ. այդ նշանակում է, որ հասարակական գիտությունների հիմնարկներում ստեղծված գրությունն ըմբռնելու համար մենք պետք է մինչև վերջը պարզենք այն հարցը, թե որքան բարձր է մեր գիտական կադրերի տեսական և քաղաքական կոփվածության մակարդակը, որքանով նրանք ճիշտ են տեղաբաշխված, ճիշտ են օգտագործվում և որքան նպատակահարմար են ուղղված նրանց ջանքերը։

Կասկածից վեր է, որ Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում կան զգալի թվով շնորհալի, աշխատասեր և բարձր կուլտուրայի տեր մարդիկ՝ զինված ուսումնասիրության մարքս-լենինյան մեթոդով, նրանք տվել են և ընդունակ են տալու ավելի արժեքավոր գիտական աշխատություններ։ Եվ եթե այդ կադրերը՝ իրենց բոլոր տվյալներով հանդերձ, ստեղծագործում են քիչ և դանդաղ, ապա այդ բանի պատասխանատվության զգալի մասն ընկնում է մեր հիմնարկների դիրեկցիաների ու պարտիական կազմակերպությունների ղեկավարների վրա, որոնք չեն կարողացել ստեղծել աշխատանքի համար նպաստավոր պայմաններ, ստեղծագործական աշխատանքի մթնավայր, թերությունների նկատմամբ բոլշևիկյան անհաշտության, գիտական սկզբունքային, ազնիվ քննադատության և ինքնաքննադատության մթնոլորտ։

Անհրաժեշտ է նշել սակայն, որ որակավոր և բարեխիղճ աշխատող կադրերի կողքին մեր ինստիտուտներում և սեկտորներում քիչ չեն գիտության համար պատահական մարդիկ։ Նրանց մի մասն ըստ երևույթին ինքնախաբեության զոհեր են։ Նրանք պարզապես ճիշտ չեն ընտրել իրենց աշխատանքի ճյուղը։ Տարիները անցնում են միմյանց ետևից, իսկ այդ մարդիկ հաշվետու տարվա վերջին ներկայանում են դատարկաձեռն՝ վկայակոչելով անհամար թվով «օբեկտիվ» պատճառաբանությունները, որոնք իբր թե խանգարել են իրենց պլանների կատարմանը։

Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում աշխատում են նաև առանձին ոչ բարեխիղճ մարդիկ, որոնք ցանկանում են

օգտվել գիտական աշխատողների համար Սովետական Միության ստեղծած բոլոր բարիքներից, բայց չեն ցանկանում կատարել այն պարտավորությունները, որ պարտիան, պետությունը և ժողովուրդը դրել են սովետական գիտական աշխատողի վրա։

Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների ուռճացումը ի հաշիվ գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող մարդկանց, հանդիսանում է այդ հիմնարկների ետ մնալու գլխավոր պատճառներից մեկը։

Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը ունի մեծ ինստիտուտներ, ինչպես՝ Գրականության (դիրեկտոր՝ ընկ. Մ. Մկրյան) և Պատմության (դիրեկտոր՝ ընկ. Ա. Հովհաննիսյան) ինստիտուտները։ Եթե այդ մեծ հիմնարկների բոլոր գիտական աշխատակիցները կատարեին իրենց թեմատիկ պլանները, ապա հրատարակված աշխատությունների թիվը չէր լինի այդքան աննշան։

Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների համար մի ուրիշ պատուհաս էլ համատեղության իրավունքի ակնհայտ չարաշահումն է։ Գաղտնիք չէ, որ այդ հիմնարկների մի շարք աշխատակիցներ աշխատում են երկու, երեք նույնիսկ չորս տարբեր տեղերում։

Համատեղությունների այդ վակխանալիան լրջորեն խանգարում է նոր, ընդունակ և գործունյա գիտական կադրերի առաջ քաշմանը։

Պարտիայի 15-րդ համագումարը բացահայտեց լուրջ թերություններ գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքներում, և հատկապես հասարակական գիտությունների հիմնարկներում։ Համագումարը, միաժամանակ ճիշտ կերպով նշեց այդ թերությունների հաղթահարման միջոցները։ Համագումարի՝ հասարակական գիտությունների հիմնարկներին վերաբերող որոշումների մեջ ասվում է.

«Ղեկավարվելով լեզվաբանության հարցերի մասին ընկեր Ստալինի հանճարեղ աշխատություններով, միջոցներ ձեռք առնել արմատապես բարելավելու հասարակական գիտությունների հիմնարկների աշխատանքը, նրանց գործունեությունն ուղղելով մշակելու ակտուալ պրոբլեմներ, առանձնապես լեզվաբանության և հայագիտության ուղղությամբ։ Հատուկ ուշադրություն նվիրել լեզվի մաքրության պահպանմանը և Հայաստանի սովետական շրջանի պատմության և կուլտուրայի կարևորագույն պրոբլեմների մշակմանը։

Գիտա-հետազոտական հիմնարկներն ամրացնել բարձրորակ կադրերով, բարելավել երիտասարդ, ընդունակ կադրերի պատրաստումն ու առաջ քաշումը, գիտական հիմնարկներում ստեղծել ստեղծագործական մթնոլորտ, գիտական հարցերի շուրջը կազմակերպել քննարկումներ և դիսկուսիաներ» (Հայաստանի Կ(բ)Պ 15-րդ համագումարի բանաձևը, էջ 23)։

15-րդ համագումարի ցուցումները հանդիսանում են Հասարակական գիտությունների բաժանմունքի աշխատանքի արմատական վերակառուցման և նրա հիմնարկների ետ մնալը վերացնելու բոլշևիկյան մարտական ծրագիր։ Համագումարի որոշումները պարտավորեցնում են անդադար բարձրացնել գիտական կադրերի տեսական պատրաստականության մակարդակը, նրանց որակավորումը։

Պարտիան մեզնից պահանջում է շատ լուրջ, սիստեմատիկ և ամենօրյա ուշադրություն նվիրել գիտական նոր կադրեր պատրաստելու խնդրին։ Գի-

տական աստիճաններ շնորհելիս անհրաժեշտ է ամենախիստ կերպով պահպանել այն պահանջները, որոնք առաջադրվում են այդ աստիճաններն ստացողներին։ Գիտական աստիճանի շնորհումը անարժան մարդկանց, ծանր զանցառություն է, անպատվություն է ղեկավարի, պաշտոնական և ոչ պաշտոնական օպոնենտների, գիտական խորհրդի և ամբողջ գիտական հիմնարկության համար։

Պետք է ձեռք բերել մարքս-լենինյան թեորիայի խորը ստեղծագործական յուրացումը՝ այդ գործում վճռականապես հաղթահարել դոգմատիզմը և տիրացուականությունը, պետք է վերջ տալ այն դրությանը, երբ առանձին գիտական աշխատողներ ուսումնասիրության մարքս-լենինյան մեթոդի յուրացման փոխարեն դպրոցականի երեխայական խանդավառությամբ սերտում են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների առանձին արտահայտությունները։ Զարմանալի չէ, որ նման մարդկանց աշխատությունները առանձին մարքսիստական ցիտատներով շողշողալով հանդերձ, շատ ու շատ հեռու են իսկական մարքսիստական ուսումնասիրություն լինելուց։

Հասարակական գիտությունների ինստիտուտների և սեկտորների ղեկավարների առաջ անհետաձգելի խնդիր է դրված՝ ստեղծագործորեն և խորը կերպով ուսումնասիրել լեզվագիտության խնդիրների վերաբերյալ ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունները։ Մեր մեծ առաջնորդի աշխատությունների լույսով պետք է համարձակ կերպով դնել և լուծել խոշոր նշանակություն ունեցող մի շարք գիտական խնդիրներ։ Լեզվաբանների, փիլիսոփաների, պատմաբանների և ֆիլոլոգների համատեղ ջանքերով հարկավոր է տալ հայոց լեզվի հետագա զարգացման և հարստացման ուղիների՝ նրա մաքրության պահպանման միջոցների խորը լուսաբանությունը։

Ղեկավարվելով ընկեր Ստալինի աշխատություններով, պետք է լիակատար պարզորոշություն մտցնել բարբառների և մասնավորապես գրաբարի ու արևմտահայ բարբառի գնահատման մեջ, որը խճճված է «մառիստների» կողմից։ Մեր բազմակողմանի, հարուստ, բուռն թափով զարգացող սոցիալիստական առօրյան պետք է լինի ժամանակակից հայոց լեզվի զարգացման հիմքը։ Անհրաժեշտ է մինչև վերջ բացահայտել այդ ճշմարտությունը չընդունող մարդկանց փորձերի սնանկությունը։ Հարկավոր է ամբողջ պարզորոշությամբ ցույց տալ այն սխալը, ըստ որի որպես թե գրաբարը, արևմտահայ բարբառը և ուրիշ բարբառներ ներկայումս մեր լեզվի զարգացման գլխավոր աղբյուրներն են։

Ընկեր Ստալինի աշխատությունները հնարավորություն են տալիս լույս սփռելու այնպիսի բարդ ու դժվարին խնդիրների վրա, ինչպիսիք են հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման խնդիրները։

Կենսագործելով ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարի ցուցումները, մեր գիտական աշխատողները պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերը՝ Հայաստանի սովետական շրջանի պատմության և կուլտուրայի խորը, ճիշտ գիտական ուսումնասիրության վրա։ Անշուշտ, այդ խնդրի հաջող կատարումը պահանջում է պատմության, գրականության և լեզվի ինստիտուտների համապատասխան սեկտորներն ապահովել զգալի քանակությամբ որակյալ կադրերով։

Պետք է այնպես աշխատել, որ հնարավոր լինի մեր ժողովրդին տալ բազմաթիվ բարձրորակ գրքեր՝ պատմության, փիլիսոփայության, գրակա-

նության, արվեստի և լեզվաբանության մասին, գրքեր, որոնք հիմնված լինեն մեր սոցիալիստական պրակտիկայի խորը և բազմակողմանի ուսումնասիրության վրա, անհաշտ թշնամությամբ տոգորված լինեն բուրժուանացիոնալիստական, կոսմոպոլիտական և այլ հակամարքսիստական բոլոր «իդեաների» ու «թեորիաների» մնացորդների նկատմամբ։

Գիտա-հետազոտական աշխատանքի գրվածքը բարելավելու վճռական պայմաններից մեկը ստեղծագործական, գիտական դիսկուսիաներ կազմակերպելն է։ Մենք միշտ պիտի հիշենք ընկեր Ստալինի ցուցումը, որ «...ոչ մի գիտություն չի կարող զարգանալ և առաջադիմել առանց կարծիքների պայքարի, առանց քննադատության ազատության» (Ի. Ստալին, «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ», Երևան, Հայպետհրատ, 1950 թ., էջ 66)։

Մեր գիտական հիմնարկների ղեկավարները կոչված են ամեն կերպ զարգացնելու համարձակությունը և ստեղծագործական խիզախությունը ամենից ավելի հրատապ խնդիրների առաջքաշման և լուծման ժամանակ։ Նրանք պարտավոր են աշխատակիցների կոլեկտիվ և անհատական ջանքերն ուղղել օրիգինալ, նորարար աշխատանքների ստեղծման վրա, կադրերին թույլ չտալ իրենց ուժերը վատնելու արդեն իսկ պարզաբանված կամ կյանքի և գիտության համար քիչ նշանակություն ունեցող խնդիրների լուծման վրա։

Հասարակական գիտությունների բաժանմունքի հետ մնալու հաղթահարումը մեծ մասամբ կախված է այն բանից, թե որչափով բաժանմունքը վճռականորեն և արագ կերպով ի վիճակի կլինի աղատել իր հիմնարկները գիտության համար պատահական մարդկանցից։ Ամեն կերպ պետք է աշխատել, որպեսզի գիտական կադրերի սկսված ատեստավորումը անցկացվի մտածված և լուրջ կերպով, լիովին հաշվի առնելով պետության շահերը։

Մեր կադրերը, ոգեշնչված այն մեծ խնդիրներով, որ դրել են գիտության առաջ պարտիան և սովետական պետությունը, հստակ կերպով հասկանալով գիտության մեծ դերը իրենց հայրենիքի հզորության ամրապնդման և կոմունիստական հասարակության հաղթանակի գործում, կանեն ամեն ինչ, որպեսզի լիովին կատարեն Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 15-րդ համագումարի որոշումները և վճռականապես հաղթահարեն ակադեմիայի սիստեմում հասարակական գիտությունների զարգացման մեջ եղած թերությունները։